



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

08 փետրվարի 2022 թվական

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 8/1
ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ 8-ՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ 1-ԻՆ ՆԻՍՏԻ**

Նիստին մասնակցում էր Երևանի ավագանու 50 անդամ:

Նիստը վարում էր Երևանի քաղաքապետ Հրաչյա Սարգսյանը:

Երևանի ավագանու նիստին հրավիրված էին՝ Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղար Դավիթ Համբարյանը, Երևանի քաղաքապետի խորհրդականներ՝ Կամո Արեյանը, Գարիկ Բարսեղյանը, Մերի Մարգարյանը, Իսկուհի Օսիպյանը, քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետ Գարեգին Խաչատրյանը, իրավաբանական վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Տարոն Մարգարյանը, կազմակերպական վարչության պետ Արմինե Վարդանյանը, տրանսպորտի վարչության պետի պաշտոնակատար Հայկ Սարգսյանը, մշակույթի և տուրիզմի վարչության պետ Գոշ Սարգսյանը, երեխաների և սոցիալական պաշտպանության վարչության պետ Լուսինե Հովհաննիսյանը, գործերի կառավարման և սպասարկման վարչության մատակարարման և տեխնիկական սպասարկման բաժնի պետ Արթուր Մկրտչյանը, Կենտրոն վարչական շրջանի ղեկավար Ավետ Պողոսյանը:

Երևանի քաղաքապետ Հ.Սարգսյանի կողմից առաջարկվեց Երևանի ավագանու հերթական նիստը գումարել 2022 թվականի մարտի 15-ին, ժամը 11.00-ին:

ՈՐՈՇՎԵՑ – Երևանի ավագանու հերթական նիստը գումարել 2022 թվականի մարտի 15-ին, ժամը 11.00-ին:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 54 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 54, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0

Որոշումն ընդունվել է միաձայն

Երևանի քաղաքապետ Հ. Սարգսյանը, ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 31-րդ հոդվածի 5-րդ մասով՝ տեղեկացրեց.

-Համաձայն Կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2021 թվականի դեկտեմբերի 29-ի հ.42, 43, 44 և 45 արձանագրությունների՝ Երևանի ավագանու Իմ Քայլը կուսակցությունների դաշինքի ընտրական ցուցակից ընտրված և լիազորությունները վաղաժամկետ դադարած ավագանու անդամներ՝ Հայկ Մարությանի, Պավել Մազմանյանի, Ռուբեն Հայրապետյանի և Լիլիթ Պիպոյանի մանդատները համապատասխանաբար տրվել են Իմ Քայլը կուսակցությունների դաշինքի ընտրական ցուցակի հերթական հաջորդ թեկնածուներ **Նաիրի Փեթակչյանին, Գայանե Խաչատրյանին, Արսեն Վերդիյանին, Արտաշես Մակարյանին:**

Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ՝ Օվսաննա Հովսեփյանը, Լիլիթ Կիրակոսյանը, Սերգեյ Սարգսյանը, Միսակ Սարգսյանը, Արտաշես Մակարյանը դիմումներ են ներկայացրել ավագանու անդամի իրենց լիազորությունները դադարեցնելու մասին:

Համաձայն Կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2022 թվականի հունվարի 10-ի հ.46, հունվարի 13-ի հ.47 արձանագրությունների՝ Երևանի ավագանու Իմ Քայլը կուսակցությունների դաշինքի ընտրական ցուցակից ընտրված և լիազորությունները վաղաժամկետ դադարած ավագանու անդամներ՝ Օվսաննա Հովսեփյանի և Լիլիթ Կիրակոսյանի մանդատները տրվել են Իմ Քայլը կուսակցությունների դաշինքի ընտրական ցուցակի հերթական հաջորդ թեկնածուներ **Արմեն Մանուկյանին և Շուշանա Սիրականյանին:**

Արմեն Մանուկյանը և Շուշանա Սիրականյանը դիմումներ են ներկայացրել ավագանու անդամի իրենց լիազորությունները դադարեցնելու մասին:

Համաձայն Կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2022 թվականի հունվարի 13-ի հ.48, հունվարի 21-ի հ.49, 50, 51, 52 արձանագրությունների՝ Երևանի ավագանու Իմ Քայլը կուսակցությունների դաշինքի ընտրական ցուցակից ընտրված և լիազորությունները վաղաժամկետ դադարած ավագանու անդամներ Սերգեյ Սարգսյանի, Միսակ Սարգսյանի, Արտաշես Մակարյանի, Արմեն Մանուկյանի և Շուշանա Սիրականյանի մանդատները տրվել են Իմ Քայլը կուսակցությունների

դաշինքի ընտրական ցուցակի հերթական հաջորդ թեկնածուներ **Միքայել Բաղդասարյանին, Աննա Ավանեսյանին, Աշոտ Առուշանյանին, Վահան Ներսիսյանին, Հեղինե Ոսկանյանին:**

Աննա Ավանեսյանը և Վահան Ներսիսյանը դիմումներ են ներկայացրել ավագանու անդամի իրենց լիազորությունները դադարեցնելու մասին:

Համաձայն Կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2022 թվականի հունվարի 27-ի հ.53 և 54 արձանագրությունների՝ Երևանի ավագանու Իմ Քայլը կուսակցությունների դաշինքի ընտրական ցուցակից ընտրված և լիազորությունները վաղաժամկետ դադարած ավագանու անդամներ՝ Վահան Ներսիսյանի և Աննա Ավանեսյանի մանդատները համապատասխանաբար տրվել են Իմ Քայլը կուսակցությունների դաշինքի ընտրական ցուցակի հերթական հաջորդ թեկնածուներ՝ **Լևոն Սահակյանին և Մանուել Մարգարյանին:**

Հիմք ընդունելով Երևան քաղաքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 28-ի «Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ նշանակելու մասին» հ.485-Ա որոշումը և ղեկավարվելով Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի հունիսի 18-ի N 1-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 55-րդ կետով՝ Երևանի ավագանու ֆինանսավարկային և տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Լևոն Հովհաննիսյանը դադարեցրել է հանձնաժողովի նախագահի լիազորությունները և դուրս է եկել ֆինանսավարկային և տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի կազմից:

Երևանի ավագանու ֆինանսավարկային և տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի տեղակալ Լուսինե Գևորգյանն իր դիմումի համաձայն դադարեցրել է հանձնաժողովի նախագահի տեղակալի լիազորությունները:

Երևանի քաղաքապետ Հ. Սարգսյանն առաջարկեց օրակարգի նախագծի 17-ից 23-րդ հարցերը քննարկել օրակարգի նախագծի՝ որպես 3-րդից 9-րդ հարցեր, իսկ օրակարգի 30-րդ հարցը հանել քննարկումից:

Օրակարգի նախագծի վերաբերյալ արտահերթ ելույթներով հանդես եկավ Երևան քաղաքի ավագանու ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության ղեկավար Միքայել Մանրիկյանը:

ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության ղեկավար Մ. Մանրիկյանի կողմից առաջարկվեց օրակարգի 11-րդ և 26-րդ հարցերը քննարկել «Հուշատախտակների տեղադրման մասին» որոշման նախագծից հետո:

Առաջարկն ընդունվեց:

ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ Արման Անտոնյանի կողմից առաջարկվեց, հաշվի առնելով, որ օրակարգի 14-րդ և 15-րդ հարցերը փոխկապակցված են, քննարկել որպես մեկ հարց:

Առաջարկը չընդունվեց:

Երևանի ավագանու անդամ Էռնեստ Ավանեսովի կողմից առաջարկվեց օրակարգի 13-րդ հարցը հանել քննարկումից, քանի որ այն չի քննարկվել Երևանի ավագանու իրավական հարցերի մշտական հանձնաժողովում:

Առաջարկը չընդունվեց:

Երևանի քաղաքապետ Հ. Սարգսյանը ներկայացրեց Երևանի ավագանու 2022 թվականի փետրվարի 8-ի նիստի օրակարգի նախագիծը.

1. Երևանի ավագանու 8-րդ նստաշրջանի 1-ին նիստի օրակարգը հաստատելու մասին:

2. Երևանի ավագանու 8-րդ նստաշրջանի ժամանակավոր հաշվիչ հանձնաժողովի կազմը հաստատելու մասին:

3. Լուսինե Մխոյանի Երևան քաղաքի ավագանու անդամի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու մասին:

4. Գևորգ Սիմոնյանին Երևանի քաղաքապետի տեղակալ նշանակելու մասին:

5. Սուրեն Գրիգորյանին Երևանի քաղաքապետի տեղակալ նշանակելու մասին:

6. Ստեփան Մաչյանին Երևանի քաղաքապետի տեղակալ նշանակելու մասին:

7. Երևան քաղաքի ավագանու ֆինանսավարկային և տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ ընտրելու և Երևան քաղաքի ավագանու 2019 թվականի ապրիլի 23-ի N79-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին:

8. Երևան քաղաքի ավագանու ֆինանսավարկային և տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի տեղակալ ընտրելու և Երևան քաղաքի

ավագանու 2019 թվականի ապրիլի 23-ի N80-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին:

9. Երևան քաղաքի ավագանու քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի տեղակալ ընտրելու և Երևան քաղաքի ավագանու 2021 թվականի փետրվարի 9-ի N322-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին:

10. Երևան քաղաքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 28-ի N497-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

11. Հուշատախտակների տեղադրման մասին:

12. Երևան քաղաքում Լևոն Ներսիսյանի անվամբ փողոց անվանակոչելու մասին:

13. «Երևանի հ.171 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունն անվանակոչելու մասին:

14. Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի հոկտեմբերի 29-ի N10-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

15. Հողամասերի փոխանակությանը համաձայնություն տալու մասին:

16. Երևան համայնքի սեփականություն համարվող Շիրակի փողոցի հ.2ա/2 շենքի հ.604 բնակարանն անհատույց օտարելու մասին:

17. Գույք նվիրաբերելու մասին:

18. Կազմակերպված ծառայողական ավտոկայանատեղերի շահագործումը շարունակելու իրավունք տալու մասին:

19. «ՆԻԿՈՂՈՍՅԱՆ ԳՐՈՒՊ» ՍՊ ընկերությանը ծառայողական ավտոկայանատեղ կազմակերպելու իրավունք տալու մասին:

20. Գույքը որպես նվիրաբերություն ընդունելու մասին:

21. Երևանի քաղաքապետի 2021 թվականի դեկտեմբերի 3-ի N4295-Ա որոշումը և «Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի համալիր մարզադպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը հաստատելու մասին:

22. «Երևանի Կենտրոնի աթլետիկայի մանկապատանեկան մարզադպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության լուծարման մասին:

23. «Երևանի Կենտրոնի մանկապատանեկան համալիր մարզադպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության լուծարման մասին:

24. «Երևանի Շենգավիթի սեղանի թենիսի և թենիսի մանկապատանեկան մարզադպրոց», «Երևանի Շենգավիթի ակրոբատիկայի և գեղարվեստական մարմնամարզության մանկապատանեկան մարզադպրոց» և «Շենգավիթի նետաձգության մարզակումբ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունները վերակազմակերպելու, «Շենգավիթի համալիր մարզաձևերի մանկապատանեկան մարզադպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության անվանափոխման և կանոնադրությունը նոր խմբագրությամբ հաստատելու մասին:

25. Երևան քաղաքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 28-ի հ.499-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

26. Երևան քաղաքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 28-ի հ.500-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

27. Հողամասերի նպատակային նշանակությունները փոխելու մասին:

28. Հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին:

29. Հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին:

30. Երևան համայնքի սեփականություն հանդիսացող՝ Երևան համայնքի Հ.Թևոսյան փողոցի հ.9 հասցեում գտնվող արտադրական շինությունները քանդելու մասին:

1. ԼՍԵՑԻՆ – Երևանի ավագանու 8-րդ նստաշրջանի 1-ին նիստի օրակարգը հաստատելու մասին:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 54 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 52, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0

Որոշումն ընդունվել է միաձայն

2. ԼՍԵՑԻՆ – Երևանի ավագանու 8-րդ նստաշրջանի ժամանակավոր հաշվիչ հանձնաժողովի կազմը հաստատելու մասին:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 54 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 53 , դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0

Որոշումն ընդունվել է միաձայն

3. ԼՍԵՑԻՆ - Լուսինե Մխոյանի՝ Երևան քաղաքի ավագանու անդամի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու մասին:

ՋԵԿՈՒՑԵՑ – Երևան քաղաքի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության ղեկավար Արմեն Գալջանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարցեր ուղղելու համար գրանցվել է ավագանու 3 անդամ.

1. Մարկոս Հարությունյան – Երևան քաղաքի ավագանու ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության քարտուղար

2. Էռնեստ Ավանեսով – Երևան քաղաքի ավագանու անդամ

3. Իզաբելլա Աբգարյան – Երևան քաղաքի ավագանու անդամ

Բարձրացված հարցերի վերաբերյալ պարզաբանում ներկայացրեց Երևան քաղաքի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության ղեկավար Արմեն Գալջանը:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակված գլխադասային հանձնաժողովի նախագահ Մարատ Թոխյանը տեղեկացրեց, որ «Լուսինե Մխոյանի Երևան քաղաքի ավագանու անդամի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ - Ելույթների համար գրանցվել է ավագանու 5 անդամ.

1. Իզաբելլա Աբգարյան – Երևան քաղաքի ավագանու անդամ

2. Դավիթ Խաժակյան – Երևան քաղաքի ավագանու ԼՈՒՅՍ խմբակցության ղեկավար

3. Սերգեյ Գյոզալյան – Երևան քաղաքի ավագանու անդամ

4. Միքայել Մանրիկյան – Երևան քաղաքի ավագանու ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության ղեկավար

5. Անի Խաչատրյան – Երևան քաղաքի ավագանու ԼՈՒՅՍ խմբակցության քարտուղար:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Վաղաժամկետ դադարեցնել Լուսինե Աշոտի Մխոյանի Երևան քաղաքի ավագանու անդամի լիազորությունները:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 54 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 45 , դեմ՝ 8, ձեռնպահ՝ 1

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ

4. ԼՍԵՑԻՆ – Գևորգ Սիմոնյանին Երևանի քաղաքապետի տեղակալ նշանակելու մասին:

Երևանի քաղաքապետի տեղակալի թեկնածությունը ներկայացրեց Երևանի քաղաքապետ Հրաչյա Սարգսյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարցեր ուղղելու համար գրանցվել է ավագանու 2 անդամ.

1. Անի Խաչատրյան – Երևան քաղաքի ավագանու ԼՈՒՅՍ խմբակցության քարտուղար

2. Էռնեստ Ավանեսով – Երևան քաղաքի ավագանու անդամ

Բարձրացված հարցերի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեցին Երևանի քաղաքապետ Հրաչյա Սարգսյանը և Երևանի քաղաքապետի տեղակալի թեկնածու Գևորգ Սիմոնյանը:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակված գլխադասային հանձնաժողովի նախագահ Մարատ Թոխյանը տեղեկացրեց, որ «Գևորգ Սիմոնյանին Երևանի քաղաքապետի տեղակալ նշանակելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ - Ելույթների համար գրանցվել է ավագանու 4 անդամ.

1. Թեհմինա Վարդանյան – Երևան քաղաքի ավագանու ԼՈՒՅՍ խմբակցության անդամ

2. Միքայել Մանրիկյան - Երևան քաղաքի ավագանու ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության ղեկավար

3. Աշոտ Սարգսյան – Երևան քաղաքի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

4. Դավիթ Խաժակյան – Երևան քաղաքի ավագանու ԼՈՒՅՍ խմբակցության ղեկավար:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Գևորգ Սիմոնյանին նշանակել Երևանի քաղաքապետի տեղակալ:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 53 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 51, դեմ՝ 0 , ձեռնպահ՝ 2

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ

5. ԼՍԵՑԻՆ – Սուրեն Գրիգորյանին Երևանի քաղաքապետի տեղակալ նշանակելու մասին:

Երևանի քաղաքապետի տեղակալի թեկնածությունը ներկայացրեց Երևանի քաղաքապետ Հրաչյա Սարգսյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարցեր ուղղելու համար գրանցվել է ավագանու 4 անդամ.

1. Մարկոս Հարությունյան – Երևան քաղաքի ավագանու ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության քարտուղար

2. Անի Խաչատրյան – Երևան քաղաքի ավագանու ԼՈՒՅՍ խմբակցության քարտուղար

3. Արթուր Իսախիրյան – Երևան քաղաքի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

4. Արմեն Ներսիսյան – Երևան քաղաքի ավագանու ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության անդամ:

Բարձրացված հարցերի վերաբերյալ պարզաբանում ներկայացրեց Երևանի քաղաքապետի տեղակալի թեկնածու Սուրեն Գրիգորյանը:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակված գլխադասային հանձնաժողովի նախագահ Մարատ Թոխյանը տեղեկացրեց, որ «Սուրեն Գրիգորյանին Երևանի քաղաքապետի տեղակալ նշանակելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ - Ելույթների համար ավագանու անդամներ չեն գրանցվել.

ՈՐՈՇՎԵՑ – 1. Սուրեն Գրիգորյանին նշանակել Երևանի քաղաքապետի տեղակալ:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 53 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 50, դեմ՝ 0 , ձեռնպահ՝ 1

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ

6. ԼՍԵՑԻՆ – Ստեփան Մաչյանին Երևանի քաղաքապետի տեղակալ նշանակելու մասին:

Երևանի քաղաքապետի տեղակալի թեկնածությունը ներկայացրեց Երևանի քաղաքապետ Հրաչյա Սարգսյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՅԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարցեր ուղղելու համար գրանցվել է ավագանու 3 անդամ.

1. Լևոն Զաքարյան – Երևան քաղաքի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

2. Իզաբելլա Աբգարյան – Երևան քաղաքի ավագանու անդամ

3. Մարկոս Հարությունյան – Երևան քաղաքի ավագանու ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության քարտուղար:

Բարձրացված հարցերի վերաբերյալ պարզաբանում ներկայացրեց Երևանի քաղաքապետի տեղակալի թեկնածու Ստեփան Մաչյանը:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակված գլխադասային հանձնաժողովի նախագահ Մարատ Թոխյանը տեղեկացրեց, որ «Ստեփան Մաչյանին Երևանի քաղաքապետի տեղակալ նշանակելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ - Ելույթների համար գրանցվել է ավագանու 4 անդամ.

1. Սիփան Ասատրյան - Երևան քաղաքի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

2. Սաթենիկ Մկրտչյան – Երևան քաղաքի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

3. Նուարդ Վարդանյան – Երևան քաղաքի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

4. Արմեն Ղալեչյան – Երևան քաղաքի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Ստեփան Մաչյանին նշանակել Երևանի քաղաքապետի տեղակալ:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 55 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 52, դեմ՝ 0 , ձեռնպահ՝ 1

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ

7. ԼՍԵՑԻՆ – Երևան քաղաքի ավագանու ֆինանսավարկային և տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ ընտրելու և Երևան քաղաքի ավագանու 2019 թվականի ապրիլի 23-ի N79-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին:

ՁԵԿՈՒՑԵՑ – Երևան քաղաքի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության ղեկավար Արմեն Գալստյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Մարատ Թոխյանը տեղեկացրեց, որ «Երևան քաղաքի ավագանու ֆինանսավարկային և տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ ընտրելու և Երևան քաղաքի ավագանու 2019 թվականի ապրիլի 23-ի N79-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ - Ելույթի համար գրանցվել է ավագանու 1 անդամ.

1. Լուսինե Գևորգյան – Երևան քաղաքի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան քաղաքի ավագանու ֆինանսավարկային և տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ ընտրել Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ Լուսինե Գևորգյանին:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 48 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 46, դեմ՝ 0 , ձեռնպահ՝ 0

Որոշումն ընդունվել է միաձայն

8. ԼՍԵՑԻՆ - Երևան քաղաքի ավագանու ֆինանսավարկային և տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի տեղակալ ընտրելու և Երևան քաղաքի ավագանու 2019 թվականի ապրիլի 23-ի N80-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին:

ՁԵԿՈՒՑԵՑ – Երևան քաղաքի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության ղեկավար Արմեն Գալջյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Ձեկուցողին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Մարատ Թոխյանը տեղեկացրեց, որ «Երևան քաղաքի ավագանու ֆինանսավարկային և տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի տեղակալ ընտրելու և Երևան քաղաքի ավագանու 2019 թվականի ապրիլի 23-ի N80-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ - Ելույթների համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան քաղաքի ավագանու ֆինանսավարկային և տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի տեղակալ ընտրել Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ Դիանա Քերոբյանին:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 50 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 49, դեմ՝ 0 , ձեռնպահ՝ 0

Որոշումն ընդունվել է միաձայն

9. ԼՍԵՑԻՆ - Երևան քաղաքի ավագանու քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի տեղակալ ընտրելու և Երևան քաղաքի ավագանու 2021 թվականի փետրվարի 9-ի N322-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին:

ՁԵԿՈՒՑԵՑ – Երևան քաղաքի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության ղեկավար Արմեն Գալջյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Ձեկուցողին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Մարատ Թոխյանը տեղեկացրեց, որ «Երևան քաղաքի ավագանու քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի տեղակալ ընտրելու և Երևան քաղաքի ավագանու 2021 թվականի

փետրվարի 9-ի N322-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ - Ելույթների համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

ՈՐՈՇՎԵՑ - 1. Երևան քաղաքի ավագանու քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի տեղակալ ընտրել Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ Արթուր Մայիլյանին:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ - ավագանու 50 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ - կողմ՝ 50, դեմ՝ 0 , ձեռնպահ՝ 0

Որոշումն ընդունվել է միաձայն

10. ԼՍԵՑԻՆ - Երևան քաղաքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 28-ի N497-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

ՋԵԿՈՒՑԵՑ - Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ Լևոն Հովհաննիսյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Ջեկուցողին հարց ուղղելու համար գրանցվել է ավագանու 1 անդամ.

1.Արման Անտոնյան – Երևան քաղաքի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ:

Բարձրացված հարցի վերաբերյալ պարզաբանում ներկայացրեց Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ Լևոն Հովհաննիսյանը:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակված գլխադասային հանձնաժողովի նախագահ Լուսինե Գևորգյանը տեղեկացրեց, որ «Երևան քաղաքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 28-ի N497-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ - Ելույթների համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

ՈՐՈՇՎԵՑ - 1. Երևան քաղաքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 28-ի «Երևան քաղաքի 2022 թվականի բյուջեն հաստատելու մասին» N 497-Ն որոշման NN

2, 3, 4, 5, 6 և 7 հավելվածներում կատարել փոփոխություններ՝ համաձայն NN 1-6 հավելվածների:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 53 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 51, դեմ՝ 0 , ձեռնպահ՝ 0

Որոշումն ընդունվել է միաձայն

11. ԼՍԵՑԻՆ - Հուշատախտակների տեղադրման մասին:

ՋԵԿՈՒՑԵՑ –Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի կազմակերպական վարչության պետ Արմինե Վարդանյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Ջեկուցողին հարց ուղղելու համար գրանցվել է ավագանու 1 անդամ.

1. Միքայել Մանրիկյան – Երևան քաղաքի ավագանու ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության ղեկավար:

Բարձրացված հարցի վերաբերյալ պարզաբանում ներկայացրեց Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի կազմակերպական վարչության պետ Արմինե Վարդանյանը:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Հայկ Միրզոյանը տեղեկացրեց, որ «Հուշատախտակների տեղադրման մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ - Ելույթների համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

ՈՐՈՇՎԵՑ – 1.Տալ համաձայնություն.

1) անվանի կոմպոզիտոր, ժողովրդական արտիստ Ալեքսանդր Աճեմյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Մաշտոցի պողոտա h.45 հասցեում փակցնելու համար,

2) աշխարհահռչակ օպերային երգչուհի, ՀՀ ժողովրդական արտիստ Արաքս Դավթյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Կիևյան փողոց h.10 հասցեում փակցնելու համար.

3) անվանի արձակագիր, գրող, հրապարակախոս, թարգմանիչ Էդուարդ Ավագյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Մաշտոցի պողոտա հ.48 հասցեում փակցնելու համար,

4) վիրաբույժ, ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ, դոկտոր, պրոֆեսոր Իվան Գևորգյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Ամիրյան փողոց հ.8 հասցեում փակցնելու համար:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 52 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 46, դեմ՝ 1, ձեռնպահ՝ 2

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ

12. ԼՍԵՑԻՆ - Երևան քաղաքում Լևոն Ներսիսյանի անվամբ փողոց անվանակոչելու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ – Երևան քաղաքի ավագանու անդամ Իզաբելլա Աբգարյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարցեր ուղղելու համար գրանցվել է ավագանու 2 անդամ.

1. Թեհմինա Վարդանյան – Երևան քաղաքի ավագանու ԼՈՒՅՍ խմբակցության անդամ

2. Սերգեյ Գյոզալյան – Երևան քաղաքի ավագանու անդամ:

Բարձրացված հարցերի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեց Երևան քաղաքի ավագանու անդամ Իզաբելլա Աբգարյանը:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակված գլխադասային հանձնաժողովի նախագահ Հայկ Միրզոյանը տեղեկացրեց, որ «Երևան քաղաքում Լևոն Ներսիսյանի անվամբ փողոց անվանակոչելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ - Ելույթների համար գրանցվել է ավագանու 2 անդամ.

1. Դավիթ Խաժակյան – Երևան քաղաքի ավագանու ԼՈՒՅՍ խմբակցության ղեկավար

2. Մարկոս Հարությունյան – Երևան քաղաքի ավագանու ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության քարտուղար:

Եզրափակիչ ելույթով հանդես եկավ Երևան քաղաքի ավագանու անդամ Իզաբելլա Աբգարյանը:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի Հրաչյա Ներսիսյան փողոցից դեպի Ավետիս Ահարոնյան փողոց ձգվող ճանապարհահատվածն անվանակոչել գրականագետ, դերասան և ԵՊՀ ռոմանագերմանական ֆակուլտետի դոցենտ Լևոն Ներսիսյանի անվամբ՝ «Լևոն Ներսիսյան փողոց»:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 51 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 38, դեմ՝ 2, ձեռնպահ՝ 9

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ

13. ԼՍԵՑԻՆ - «Երևանի հ.171 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունն անվանակոչելու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ – Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի կազմակերպական վարչության պետ Արմինե Վարդանյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Հայկ Միրզոյանը տեղեկացրեց, որ «Երևանի հ.171 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունն անվանակոչելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ - Ելույթի համար գրանցվել է ավագանու 1 անդամ.

1. Սաթենիկ Մկրտչյան – Երևան քաղաքի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ:

ՈՐՈՇՎԵՑ – 1. «Երևանի հ.171 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունն անվանակոչել հայ շախմատիստ, միջազգային գրոսմայստեր, համաշխարհային շախմատային օլիմպիադայի չեմպիոն Կարեն Ասրյանի անունով՝ «Երևանի Կարեն Ասրյանի անվան հ.171 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություն:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 46 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 43, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 2

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ

14. ԼՍԵՑԻՆ - Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի հոկտեմբերի 29-ի N 10-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

ՁԵԿՈՒՑԵՑ – Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի երեխաների և սոցիալական պաշտպանության վարչության պետ Լուսինե Հովհաննիսյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Ձեկուցողին հարց ուղղելու համար գրանցվել է ավագանու 1 անդամ.

1. Սաթենիկ Մկրտչյան – Երևան քաղաքի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ:

Բարձրացված հարցի վերաբերյալ պարզաբանում ներկայացրեց Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի երեխաների և սոցիալական պաշտպանության վարչության պետ Լուսինե Հովհաննիսյանը:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակված գլխադասային հանձնաժողովի նախագահ Լուսինե Գևորգյանը տեղեկացրեց, որ «Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի հոկտեմբերի 29-ի N 10-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ - Ելույթի համար գրանցվել է ավագանու 1 անդամ.

1. Սաթենիկ Մկրտչյան - Երևան քաղաքի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի հոկտեմբերի 29-ի «Երևանի քաղաքապետարանի և վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմերի կառուցվածքը, հաստիքացուցակը, աշխատակիցների թվաքանակը, Երևանի քաղաքապետի, նրա տեղակալների, խորհրդականների, օգնականների, մամուլի քարտուղարի, քաղաքապետարանի աշխատակազմի աշխատակիցների, վարչական շրջանների ղեկավարների, ղեկավարների տեղակալների, վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմերի աշխատակիցների պաշտոնային դրույքաչափերը հաստատելու և Երևան քաղաքի ավագանու 2017 թվականի հունիսի 16-ի N 16-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N 10-Ա որոշման մեջ կատարել հետևյալ լրացումը և փոփոխությունները.

1) Որոշման N 1 հավելվածի «II. Առանձնացված ստորաբաժանումներ» բաժնի «Երևանի Աջափնյակ, Ավան, Արաբկիր, Դավթաշեն, Էրեբունի, Կենտրոն, Մալաթիա-Սեբաստիա, Նոր Նորք, Նորք-Մարաշ, Նուբարաշեն, Շենգավիթ, Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի» գլուխների 1-ին կետերը լրացնել նոր «2.1)» ենթակետով հետևյալ բովանդակությամբ.

«2.1) երեխաների և սոցիալական պաշտպանության բաժին»

2) ուժը կորցրած ճանաչել որոշման N 1 հավելվածի «II. Առանձնացված ստորաբաժանումներ» բաժնի «Երևանի Աջափնյակ վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի», «Երևանի Ավան վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի», «Երևանի Արաբկիր վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի», «Երևանի Դավթաշեն վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի», «Երևանի Էրեբունի վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի», «Երևանի Կենտրոն վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի», «Երևանի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի», «Երևանի Նոր Նորք վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի», «Երևանի Նորք-Մարաշ վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի», «Երևանի Նուբարաշեն վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի», «Երևանի Շենգավիթ վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի», «Երևանի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի» գլուխների 1-ին կետերի 7-րդ ենթակետերը.

3) Որոշման N 2 հավելվածում՝

ա. ուժը կորցրած ճանաչել «II. Առանձնացված ստորաբաժանումներ» բաժնի «Երևանի վարչական շրջանների ղեկավարների աշխատակազմերի աշխատակիցներ» գլխում շարադրված «Սոցիալական ապահովության, առողջապահության և ծրագրերի» բաժինները

բ. «Երևանի Աջափնյակ վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի աշխատակիցներ» գլխում շարադրված «Սոցիալական ապահովության, առողջապահության և ծրագրերի» բաժինը լրացնել հետևյալ խմբագրությամբ.

</>	Հաստիքի անվանումը	Հաստիքների քանակը	Հաստիքների ամսական պաշտոնային դրույքաչափը	հավելում	Ընդամենը ամսական աշխատավարձ
2.1	Աջափնյակ վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմ				

-	Երեխաների և սոցիալական պաշտպանության բաժին				
1.	Բաժնի պետ	1	387,600		387,600
2.	Գլխավոր մասնագետ-սոցիալական աշխատող	3	289,000		867,000
3.	Գլխավոր մասնագետ-հոգեբան	1	289,000		289,000
4.	Առաջատար մասնագետ	1	282,200		282,200
5.	Առաջին կարգի մասնագետ	1	272,000		272,000
-	Ընդ.	7			2,097,800

բ.1. «II. Առանձնացված ստորաբաժանումներ» բաժնի 2.1. կետում «Ամբողջը» տողի «107» և «30,797,200» թվերը փոխարինել համապատասխանաբար «109» և «31,392,200» թվերով.

գ. «Երևանի Ավան վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի աշխատակիցներ» գլխում շարադրված «Սոցիալական ապահովության, առողջապահության և ծրագրերի» բաժինը լրացնել հետևյալ խմբագրությամբ.

Հ/Հ	Հաստիքի անվանումը	Հաստիքների քանակը	Հաստիքների ամսական պաշտոնային դրույքաչափը	հավելում	Ընդամենը ամսական աշխատավարձ
2.2	Ավան վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմ				
-	Երեխաների և սոցիալական պաշտպանության բաժին				
1.	Բաժնի պետ	1	387,600		387,600
2.	Գլխավոր մասնագետ-սոցիալական աշխատող	1	289,000		289,000
3.	Գլխավոր մասնագետ-հոգեբան	1	289,000		289,000
4.	Առաջատար մասնագետ	1	282,200		282,200
5.	Առաջին կարգի մասնագետ	1	272,000		272,000
-	Ընդ.	5			1,519,800

գ.1. «II. Առանձնացված ստորաբաժանումներ» բաժնի 2.2. կետում «Ամբողջը» տողի «85» և «24,949,200» թվերը փոխարինել համապատասխանաբար «86» և «25,238,200» թվերով.

դ. «Երևանի Արաբկիր վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի աշխատակիցներ» գլխում շարադրված «Սոցիալական ապահովության, առողջապահության և ծրագրերի» բաժինը լրացնել հետևյալ խմբագրությամբ.

Հ/Հ	Հաստիքի անվանումը	Հաստիքների քանակը	Հաստիքների ամսական պաշտոնային դրույքաչափը	հավելում	Ընդամենը ամսական աշխատավարձ
2.3	Արաբկիր վարչական շրջանի ղեկավարի				

	աշխատակազմ			
-	Երեխաների և սոցիալական պաշտպանության բաժին			
1.	Բաժնի պետ	1	387,600	387,600
2.	Գլխավոր մասնագետ-սոցիալական աշխատող	3	289,000	867,000
3.	Գլխավոր մասնագետ-հոգեբան	1	289,000	289,000
4.	Առաջատար մասնագետ	1	282,200	282,200
5.	Առաջին կարգի մասնագետ	1	272,000	272,000
-	Ընդ.	7		2,097,800

դ.1. «II. Առանձնացված ստորաբաժանումներ» բաժնի 2.3. կետում «Ամբողջը» տողի «150» և «42,551,000» թվերը փոխարինել համապատասխանաբար «151» և «42,846,800» թվերով.

ե. «Երևանի Դավթաշեն վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի աշխատակիցներ» գլխում շարադրված «Սոցիալական ապահովության, առողջապահության և ծրագրերի» բաժինը լրացնել հետևյալ խմբագրությամբ.

Հ/Հ	Հաստիքի անվանումը	Հաստիքների քանակը	Հաստիքների ամսական պաշտոնային դրույքաչափը	հավելում	Ընդամենը ամսական աշխատավարձ
2.4	Դավթաշեն վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմ				
-	Երեխաների և սոցիալական պաշտպանության բաժին				
1.	Բաժնի պետ	1	387,600		387,600
2.	Գլխավոր մասնագետ-սոցիալական աշխատող	2	289,000		578,000
3.	Գլխավոր մասնագետ-հոգեբան	1	289,000		289,000
4.	Առաջատար մասնագետ	1	282,200		282,200
-	Ընդ.	5			1,536,800

ե.1. «II. Առանձնացված ստորաբաժանումներ» բաժնի 2.4. կետում «Ամբողջը» տողի «68» և «20,209,600» թվերը փոխարինել համապատասխանաբար «69» և «20,515,600» թվերով.

զ. «Երևանի Էրեբունի վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի աշխատակիցներ» գլխում շարադրված «Սոցիալական ապահովության, առողջապահության և ծրագրերի» բաժինը լրացնել հետևյալ խմբագրությամբ.

Հ/Հ	Հաստիքի անվանումը	Հաստիքների	Հաստիքների ամսական	հավելում	Ընդամենը ամսական
-----	-------------------	------------	--------------------	----------	------------------

		քանակը	պաշտոնային դրույքաչափը		աշխատավարձ
2.5	Երեբունի վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմ				
-	Երեխաների և սոցիալական պաշտպանության բաժին				
1.	Բաժնի պետ	1	387,600		387,600
2.	Գլխավոր մասնագետ-սոցիալական աշխատող	3	289,000		867,000
3.	Գլխավոր մասնագետ-հոգեբան	1	289,000		289,000
4.	Առաջատար մասնագետ	1	282,200		282,200
5.	Առաջին կարգի մասնագետ	1	272,000		272,000
-	Ընդ.	7			2,097,800

գ.1. «II. Առանձնացված ստորաբաժանումներ» բաժնի 2.5. կետում «Ամբողջը» տողի «113» և «32,272,800» թվերը փոխարինել համապատասխանաբար «114» և «32,595,800» թվերով.

է. «Երևանի Կենտրոն վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի աշխատակիցներ» գլխում շարադրված «Սոցիալական ապահովության, առողջապահության և ծրագրերի» բաժինը լրացնել հետևյալ խմբագրությամբ.

